USAID
FROM THE AMERICAN PEOPLE

FINANCIAL SECTOR
DEEPENING PROJECT

ARMENIAN CREDIT REPORTING AGENCY

ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՆԵՐԻ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԴԱՐՁՐԵ՛Ք ՁԵՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ
2008

Ուղեցույցը նախատեսված է ընթերցողների լայն շրջանակների համար:
Նրանում տեղ գտած տեղեկատվությունը համընդհանուր բնույթի է և չի կարող պարտադիր լինել որևէ կոնկրետ դեպքի համար:
Այն կիրառելու համար խորհրդակցեք մասնագետների հետ:

Բովանդակություն

1. ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՆԵՐԸ 3
1.1 Ի՞նչ է վարկային բյուրոն 3
1.2 Հայաստանի առաջին վարկային բյուրոն 3
1.2.1. ԱՔՌԱ –ի պատմությունը 4
1.2.2. ԱՔՌԱ –ի անդամները ..... **Error! Bookmark not defined.**
2. ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ ՀՀ-ում 6
3. ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 8
3.1 ԱՔՌԱ-ի կողմից մատուցվող ծառայությունները և դրանց սակագները. 9
3.2 Վարկառուի սեփական վարկային զեկույց (Ինքնահարցում). 13
4. ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ԿԱՐԳԱՎՈՐՈՂԻ, ՎԱՐԿԱՌՈՒՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՏՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ 14
4.1 Վարկային բյուրոյի ազդեցությունը Տնտեսության վրա. 14
4.2 Վարկային բյուրոյի ազդեցությունը Կարգավորողի (Հայաստանի դեպքում ՀՀ Կենտրոնական բանկի) գործունեության արդյունավետության վրա 14
4.3 Վարկային բյուրոյի ազդեցությունը Վարկատուների վրա. 14
4.4 Վարկային բյուրոյի ազդեցությունը Վարկառուների վրա. 16
5. ՀԱՃԱԽԱԿԻ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ ..... **Error! Bookmark not defined.**

1. ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՆԵՐԸ

1.1 Ի՞նչ է վարկային բյուրոն

Վարկային բյուրոն մասնավոր կազմակերպություն է, որն իրականացնում է անձանց (անհատ կամ կազմակերպություն) ֆինանսական պարտավորությունների և դրանց կատարման պատմությունը բնորոշող տվյալների հավաքագրում, մշակում, պահպանում և փոխանցում իր անդամ հանդիսացող կազմակերպություններին՝ բանկերին, վարկային կազմակերպություններին, ապահովագրական ընկերություններին և այլ անձանց կամ առևտրային կազմակերպություններին:

Վարկառուների վերաբերյալ տվյալների ընդունում

Տվյալների մշակում

Վարկային զեկույցի տրամադրում

Այսօր զարգացած ֆինանսսական դաշտ ունեցող բոլոր երկրներում վարկային բյուրոն համարվում է ֆինանսական գործառույթների շղթայի անբաժան մասը: Այդ կառույցը խթանում է նաև բանկային ծառայությունների ներդրումն ու տարածումը:
Եթե փորձենք խմբավորել, թե ինչպիսի տվյալներ է հավաքագրում վարկային բյուրոն, ապա կարող ենք դրանք բաժանել հետևյալ խմբերի՝

- ✓ Անձին (անհատ կամ կազմակերպություն) նույնականացնող տվյալներ (հասցե, ծննդյան թիվ, անձնագրի համար),
- ✓ տվյալներ ստացված վարկերի և փոխառությունների վերաբերյալ,
- ✓ տվյալներ կատարված վճարումների պատմության վերաբերյալ,
- ✓ տվյալներ դատական վեճերի վերաբերյալ,
- ✓ այլ հանրային տվյալներ:

Վարկային բյուրոները Ֆինանսական ոլորտի մասնակիցներին մատուցում են նաև հավելյալ ծառայություններ, այդ թվում՝ վարկարժանության գնահատական (Սքորինգ), մոնիթորինգ, վիճակագրական վերլուծություններ և այլն:

1.2 Հայաստանի առաջին վարկային բյուրոն

Հայաստանում առաջին և միակ մասնավոր վարկային բյուրոն, “ԱՔՌԱ Քրեդիտ ռեփորթինգ” ՓԲԸ-ն (ԱՔՌԱ), հիմնադրվել է 2004թ.-ի հունվարին:

ԱՔՌԱ-ի անդամ կազմակերպություններն են ՀՀ ում գործող բոլոր բանկերը և վարկային կազմակերպությունների մեծամասնությունը: Ընկերությունը՝ որպես ՓԲԸ, կառավարվում է կորպորատիվ կառավարման սկզբունքներին և ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

ԱՔՌԱ-ի կազմակերպական կառուցվածքն ունի հետևյալ տեսքը՝



ԱՔՌԱ-ի հիմնական բաժնետերերն են հանդիսանում ՀՀ առևտրային բանկերը, ՀՀ կենտրոնական բանկը և ծառայությունների տվյալ ոլորտում միջազգային ճանաչում ունեցող ընկերություններ:

ԱՔՌԱ-ի տնօրենների խորհուրդը բաղկացած է ՀՀ ֆինանսական ոլորտի հանրահայտ անձանցից: ԱՔՌԱ-ի անձնակազմը բաղկացած է բանիմաց մասնագետներից, որոնք էլ ապահովում են համակարգի ամենօրյա անխափան աշխատանքը:

ԱՔՌԱ վարկային բյուրոյի հիմնական նպատակն է վարկառուների վերաբերյալ իր անդամ կազմակերպություններից տեղեկատվության հավաքագրումը, մշակումը, պարբերաբար թարմացումն ու տրամադրումն այդ կազմակերպություններին՝ ապահովելով տվյալների գաղտնիությունը:

ԱՔՌԱ-ի հիմնական առաքելությունն է բանկային, ֆինանսական և ապահովագրական ոլորտներում, ինչպես նաև ընդհանուր գործարար դաշտում լինել ռիսկերի գնահատման, նորանոր ծառայությունների մատուցման հիմնական առաջատարը:

1.2.1. ԱՔՌԱ –ի պատմությունը

Հունվար 2004թ. “ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ” ՍՊԸ-ն՝ Հայաստանում առաջին և միակ վարկային բյուրոն, հիմնադրվեց ամերիկյան “Քրիդենշըլ Ինք. Կորպորացիա” ընկերության կողմից:

Սեպտեմբեր 2004թ. Համաշխարհային բանկի(WORLD BANK), Գերմանա-հայկական հիմնադրամի (KFW), ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) և Եվրոպական վերակառուցման և զարգացման բանկի (EBRD) հայաստանյան ներկայացուցչությունները դարձան ԱՔՌԱ-ի խորհրդատվական խորհրդի անդամներ:

Նոյեմբեր 2004թ. Ընտրվեց ծրագրավորողների թիմը, և սկսվեցին գործառնական ծրագրային փաթեթի մշակման աշխատանքները:

Փետրվար 2005թ.	Տեղեկատվական ոլորտի առաջատար Դան ընդ Բրեդստրիթ Ինթերնեշնլ (Dun & Bradstreet Int.) կազմակերպությունը դարձավ ԱՔՌԱ-ի 5% բաժնետեր և ռազմավարական գործընկեր:
Դեկտեմբեր 2005թ.	ԱՔՌԱ-ն վերակազմակերպվեց որպես փակ բաժնետիրական ընկերություն:
Օգոստոս 2006թ.	Հայաստանի բանկերի մեծամասնությունը դարձավ ԱՔՌԱ-ի 50.1 %-ի բաժնետեր:
Սեպտեմբեր 2006թ.	ՀՀ կենտրոնական բանկը, արժևորելով վարկային բյուրոյի դերը, դարձավ ԱՔՌԱ-ի 10%-ի բաժնետեր:
Փետրվար 2007թ.	ԱՔՌԱ-ն սկսեց զեկույցներ տրամադրել իր անդամ կազմակերպություններին առցանց (online) ռեժիմում:
Փետրվար 2008թ.	✓ Վարկառուների քանակը ԱՔՌԱ-ի տվյալների բազայում կազմում է 632637 անձ, ✓ Վարկերի քանակը (մարված և գործող) կազմում է 1350450 վարկ, ✓ Թողարկված վարկային զեկույցների քանակը կազմում է 4222 հատ:

2. ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ ՀՀ-ում

ՀՀ օրենսդրությունը դեռևս առանձին իրավական ակտով չի կարգավորում վարկային բյուրոների գործունեությունը, այնինչ ներկայիս օրենսդրությամբ նախատեսված չեն որևէ խոչընդոտներ վարկային բյուրոների գործունեությունը ծավալելու համար: Այնուամենայնիվ, գիտակցելով կառույցի կարևորությունը ամբողջ տնտսության համար, ՀՀ կառավարությունը մշակել և ՀՀ ազգային ժողովի քննարկմանն է ներկայացրել «ՎԱՐԿԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենքի նախագիծը, որով՝

- Ընդլայնվել և կանոնակարգվել է տեղեկատվության շրջանառությունը,
- Կանոնակարգվել է վարկային բյուրոների գործունեությունը,
- Սահմանվել են անձանց շահերը պաշտպանող նորմեր:

Օրենքի ընդունումից հետո բյուրոյին տվյալներ տրամադրող կազմակերպությունները կբաժանվեն երկու խմբի՝

✓ Բյուրոյին պարտադիր հիմունքներով տվյալներ տրամադրողներ՝



✓ Բյուրոյին կամավոր հիմունքներով տվյալներ տրամադրողներ՝



Օրենքի ընդունումից հետո կկանոնակարգվեն նաև բյուրոյի գործունեության վերահսկողության և լիցենզավորման խնդիրները: Լիցենզավորվող և վերահսկող պետական իրավասու մարմին է հանդիսանալու ՀՀ Կենտրոնական բանկը: Ի դեպ, լիցենզավորման համար կնախատեսվի բարդ ընթացակարգ՝ շեշտադրում կատարելով նաև բյուրոյի տեխնիկական և ծրագրային ապահովվածության և տվյալների բազայի պաշտպանվածության վրա:



Օրենքի նախագիծը սահմանում է նաև դրույթներ՝ ուղղված անձանց (վարկառուների) շահերի պաշտպանությանը, այդ թվում՝

- Անձն իրավունք ունի ծանոթանալ իր վարկային զեկույցում առկա տեղեկատվությանը,
- բյուրոյի կողմից անձի վերաբերյալ տեղեկատվությունը երրորդ կողմին տրամադրվում է նրա գրավոր համաձայնությամբ,
- անձն իրավունք ունի ծանոթանալ իր վերաբերյալ հարցում կատարած անձանց ցանկին,
- անձի վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվում է միայն որոշակի նպատակների համար,
- արգելվում է հավաքագրել անձի վերաբերյալ այնպիսի տվյալներ, որը վերաբերում է նրա քաղաքական, սոցիալական վիճակին, ռասսայական, էթնիկական ծագմանը, մշակութային, կրոնական, փիլիսոփայական հայացքներին, կուսակցական կամ միությունների անդամությանը, նախասիրություններին, ինչպես նաև առողջությանը և սեռական հարցերին,
- անձն իրավունք ունի բողոքարկել վարկային բյուրոյում առկա տվյալները և ճշգրտել դրանք :

Օրենքի նախագիծը սահմանում է նաև, որ՝

- Բյուրոները պարտավոր են ունենալ տվյալների ուղղման դյուրին և արդյունավետ ընթացակարգեր,
- սխալ կամ թերի տվյալների ուղղումը պետք է կատարվի ողջամիտ, այսինքն՝ հնարավորինս սեղմ ժամկետներում,
- բյուրոները պարտավոր են հնարավոր ջանքեր գործադրել անձանց և կազմակերպությունների գաղտնի տվյալները պահպանելու և անօրինական հրապարակումից զերծ պահելու ուղղությամբ:

3. ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Վարկային բյուրոյի կողմից մատուցվող ամենատարածված ծառայությունը վարկային զեկույցների տրամադրումն է իր անդամ կազմակերպություններին:

  ՎԱՐԿԱՅԻ ԶԵԿՈՒՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

  Վարկային զեկույցը պարունակում է մանրամասն տեղեկություններ անձանց (անհատների կամ կազմակերպությունների) կողմից նախկինում ստանձնած ֆինանսական պարտավորությունների և դրանց մարումների, այդ թվում՝ ժամկետանց մարումների վերաբերյալ:

  Երբ անձը (անհատ կամ կազմակերպություն) վարկավորվում է բանկի կամ վարկային կազմակերպության կողմից, վերջինս անձի վերաբերյալ տեղեկությունները փոխանցում է վարկային բյուրո, որոնք հետագայում պարբերաբար թարմացվում են (շաբաթական կամ ամսական կտրվածքով) վարկային տվյալներում կատարվող փոփոխություններին զուգընթաց:

  Այս տեղեկատվությունն օգտագործվում է բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից՝ իրենց հաճախորդների վարկարժանությունը գնահատելու նպատակով, այն է՝ գնահատել հաճախորդի հնարավորությունը և ցանկությունը նախատեսված ժամկետում և պայմաններով մարելու ստանձնած պարտավորությունները: Այն օգնում է կայացնել տեղեկացված որոշումներ վարկի տրամադրման և վերջինիս պայմանների վերաբերյալ:

- Վարկային բյուրոների կողմից մատուցվող մյուս տարածված ծառայությունը վարկարժանության գնահատականն է (Սքորինգ):

  Սքորինգը ձևավորվում է վարկառուի ֆինանսական պարտավորությունների կատարման ամբողջական պատկերի հիման վրա: Արդյունքում ընդամենը մեկ թվային ցուցանիշի օգնությամբ ֆինանսական հաստատությունը հնարավորություն է ստանում կանխատեսել վարկառուի ֆինանսական պարտաճանաչության աստիճանը:

- Վարկային բյուրոներն իրենց անդամ կազմակերպություններին մատուցում են նաև այնպիսի լրացուցիչ ծառայություններ, ինչպիսին «Մոնիթորինգն» է:

  Այս ծառայությունից օգտվելով՝ անդամ կազմակերպությունները հնարավորություն են ստանում իրենց ընտրած անձանց (վարկառուների) համար անմիջապես տեղեկանալ վերջիններիս կողմից այլ հաստատություններում վարկային կամ ֆինանսական պարտավորության կատարման վերաբերյալ,

  Բացի այդ անդամ կազմակերպությունները կարող են նաև տեղեկացված լինել անձանց (վարկառուների) վարկային պատմության մեջ կատարվող ցանկացած փոփոխության մասին, այդ թվում՝ նույնականացման տվյալների (օրինակ՝ հասցե, կազմակերպության տնօրեն և այլն), ինչը վարկատու կազմակերպության ձեռքում իր ռիսկերը գնահատելու լրացուցիչ գործիք է:

- Տնտեսապես զարգացած երկրներում վարկային բյուրոները մատուցում են նաև այնպիսի հավելյալ ծառայություններ, ինչպիսիք են՝
  - վիճակագրական ամփոփ տեղեկագրերի հրապարակումը,
  - ռեյթինգավորումը,
  - ռիսկերի կառավարումը,
  - մասնագիտացված տվյալների բազաների ստեղծումը և համապատասխան տվյալների հիման վրա զեկույցների տրամադրումը:

3.1 ԱՔՌԱ-ի կողմից մատուցվող ծառայությունները և դրանց սակագները.

ԱՔՌԱ-ի կողմից տրամադրվող վարկային զեկույցները, կախված անձի կարգավիճակից, բաժանվում են երկու խմբի՝ սպառողական և առևտրային:

- Սպառողական վարկային զեկույցները պարունակում են տեղեկություններ անհատների (ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի) վերաբերյալ:
- Առևտրային վարկային զեկույցները պարունակում են տեղեկություններ կազմակերպությունների վերաբերյալ:

Սպառողական և առևտրային վարկային զեկույցներն իրենց հերթին բաժանվում են մի քանի տիպերի՝ կապված նրանցում պարունակվող տեղեկատվության խորության աստիճանի հետ:

ԱՔՌԱ-ն տրամադրում է Ֆիզիկական անձանց և/կամ անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ մի քանի տեսակի վարկային զեկույցներ, որոնք պարունակում են վերջիններիս վերաբերյալ հետևյալ 4 խումբ տվյալները՝

ՀՀ	Զեկույցի տեսակը	Զեկույցում պարունակվող տվյալներ են
1	**ՍՊ0** զեկույց ժամկետանց և դասակարգված վարկերի առկայության վերաբերյալ	▪ հարցման պահին ժամկետանց և դասակարգված վարկերի առկայության վերաբերյալ ▪ տեղեկություններ, ֆիզիկական անձանց և/կամ անհատ ձեռնարկատիրոջ վերաբերյալ հայտնի վարկերի քանակի, այդ թվում՝ մարված և ժամկետանց վարկերի քանակի և դրանց ռիսկի դասի վերաբերյալ տեղեկություններ:
2	**ՍՊ1** ընթացիկ, ժամկետանց և դասակարգված վարկերի վերաբերյալ	▪ կատարված հարցումների վերաբերյալ ▪ վիճակագրական տվյալներ, ինչպես նաև ▪ ընթացիկ, ժամկետանց և դասակարգված վարկերի վերաբերյալ տեղեկություններ
3	**ՍՊ2** ընթացիկ վիճակ	▪ կատարված հարցումների վերաբերյալ վիճակագրական տվյալներ, ինչպես նաև ▪ ընթացիկ բոլոր վարկերի վերաբերյալ տեղեկություններ:
4	**ՍՊ2** ամբողջական	▪ կատարված հարցումների վերաբերյալ վիճակագրական տվյալներ, ինչպես նաև ▪ ընթացիկ և նախկինում մարված բոլոր վարկերի վերաբերյալ տեղեկություններ

ԱՔՌԱ-ի կողմից ներկայացվող սպառողական վարկային զեկույցի օրինակ.

credit bureau

ՎԱՐԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ՍՊ3(ամբողջական)

№: TEM-RP-5-2008-383

Տպել զեկույցը

Հարցման ամսաթիվ: 05/05/2008

Հարցում կատարող: temp
Օգտագործող: ՄՈՒՍԻՆԵ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Անուն, ազգանուն՝	**ԱՂԱՍԻ ԱՂԱՍՅԱՆ ԱՂԱՍ ԱՂԱՍՅԱՆ**	Հայտնի հասցեներ՝ **06-05-2007 Ք. ԵՐԵՎԱՆ, ՆԱՐ-ԴՈՍԻ 102, ԲՆ. 12** **02-02-2007 Ք. ԵՐԵՎԱՆ, ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ 1178**	ՎՔՀՓ՝ **194** ՎՔՀՓՅՕ՝ **19**
Ծննդյան ամսաթիվ՝	**25-10-1969**		
Սոց. քարտի համար՝	**5264789552** **5264789558**		
Անձնագրի սերիա՝	**ZZ1111111** **XX1111111**		
Ռեզիդենտությունը՝	**Ռեզիդենտ**		
Սեռը՝	**Արական**		

Գումարային պարտքը՝ AMD - 0 USD - 4.000

Ուշադրություն՝ սույն վարկային զեկույցը կազմվել է ԱՔՌԱ-ի անդամ կազմակերպություններից ստացված տվյալների հիման վրա

Ստացված վարկեր, փոխառություններ և տրամադրված երաշխավորություններ

Երաշխավորություն համար՝ 336429045 | **Վարկատու կազմակերպություն՝temp** | **Թարմացվել է առ 02-10-2007**

Վարկի կարգավիճակը - մարված
Վարկային պայմանագրի ամսաթիվը - 01-10-2006
Վարկի տրամադրման ամսաթիվը - 01-10-2006
Վարկի վերջնական մարման ամսաթիվը - 01-10-2009
Վարկի փաստացի մարման ամսաթիվը - 02-10-2007

Վարկի տեսակը - Լիզինգ
Պայմանագրով նախատեսված վարկի գումարը - 150.000 USD
Փաստացի տրամադրված գումարը - 150.000 USD
Փաստացի մարված գումարը - 150.000 USD
Փաստացի մայր գումարի մնացորդը - 0 USD

ժամկետանց մայր գումարի մնացորդը - 0 USD
Վարկը ժամկետանց դառնալու ամսաթիվը - 00-00-0000
ժամկետանց տոկոսը - 0 USD
Վարկային ռիսկի դասը - Ստանդարտ
Երաշխավորության գումարը - 60.000

Նշումներ -

Վարկի տարեկան տոկոսադրույքը - 10%
Վարկի օգտագործման ոլորտը - Սեռնահանքային արդյունաբերություն
Վարկի օգտագործման վայրը - ԼՈՌԻ
Խմբի անդամների քանակը - 1
Երաշխավորողների թիվը - 1
Գրավի առարկան - Անշարժ գույք
Գրավի առարկայի արժեքը - 150.000 USD
Վարկի պայմանների վերանայումների թիվը - 0

	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1
2008								NO	NO	NO	NO	NO
2007	NO	NO	OK	OK	OK	OK	OK	OK	OK	OK	OK	OK
2006	OK	OK	OK									

Նշումներ գրավի վերաբերյալ -

Ստացված վարկեր, փոխառություններ և տրամադրված երաշխավորություններ

Վարկ համար՝ 210248351 | **Վարկատու կազմակերպություն՝temp** | **Թարմացվել է առ 02-10-2007**

Վարկի կարգավիճակը - մարված
Վարկային պայմանագրի ամսաթիվը - 10-03-2004
Վարկի տրամադրման ամսաթիվը - 02-02-2006
Վարկի վերջնական մարման ամսաթիվը - 10-03-2007
Վարկի փաստացի մարման ամսաթիվը - 05-10-2006

Վարկի տեսակը - Վարկային քարտով տրամադրված վարկեր
Պայմանագրով նախատեսված վարկի գումարը - 2.600.000 AMD
Փաստացի տրամադրված գումարը - 2.600.000 AMD
Փաստացի մարված գումարը - 2.600.000 AMD
Փաստացի մայր գումարի մնացորդը - 0 AMD

ժամկետանց մայր գումարի մնացորդը - 0 AMD
Վարկը ժամկետանց դառնալու ամսաթիվը - 01-09-2006
ժամկետանց տոկոսը - 0 AMD
Վարկային ռիսկի դասը - Կասկածելի

Նշումներ -

Վարկի տարեկան տոկոսադրույքը - 14%
Վարկի օգտագործման ոլորտը - Էներգետիկա
Վարկի օգտագործման վայրը - ՇԻՐԱԿ
Խմբի անդամների քանակը - 5
Երաշխավորողների թիվը - 1
Գրավի առարկան - Ավտոմեքենա
Գրավի առարկայի արժեքը - 3.000.000 AMD
Վարկի պայմանների վերանայումների թիվը - 0

	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1
2007								!	OK	OK	!	120
2006	90	60	30	NO	NO	NO	NO	NO	NO	NO	NO	NO
2005	NO	NO	NO	NO	NO	NO	NO	NO	NO	NO	NO	NO
2004	NO	NO	NO	NO	NO	NO	NO	NO	NO	NO		

Նշումներ գրավի վերաբերյալ -

Փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկություններ

Փոխկապակցված անձ 1

Անվանում՝ **"ԳԱՄՄԱ ՍԵՐՎԻՍ ԿԵՆՏՐՈՆ" ՍՊԸ**
ՀՎՀՀ՝ **09999999**

Վարկեր	ԿՊԱ	ԿՎՄԱ	ՊՆԿԳ	ՓՄԳՄ	ԺՄԳՄ	ԺՏ	ՎԺՊԱ	ԱԿ	ՎՈՊ
Վարկ 1	01-10-2006	01-10-2009	150.000	0	0	0	-	USD	Ստանդարտ
Վարկ 2	24-05-2005	24-09-2006	24.000.000	0	0	0	-	AMD	Ստանդարտ

Փոխկապակցված անձ 2

Անուն, ազգանուն՝ **ՎԱՐԴՈՒՀԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ**
Ծննդյան ամսաթիվ՝ **1978-05-04**
Սոց. քարտի համար՝ **2145075801**
Անձնագրի սերիա՝ **XX1231234**

Վարկեր	ԿՊԱ	ԿՎՄԱ	ՊՆԿԳ	ՓՄԳՄ	ԺՄԳՄ	ԺՏ	ՎԺՊԱ	ԱԿ	ՎՈՊ
Վարկ 1	11-04-2005	07-01-2007	2.700.000	0	0	0	11-06-2007	AMD	Ստանդարտ

ԱՂԱՍԻ ԱՂԱՍՅԱՆ, ԱՂԱՍ ԱՂԱՍՅԱՆԻ վերաբերյալ կատարած հարցումներ

Ամսաթիվ	Հարցում կատարող անձը	Նպատակ	Տեսակ
2008-05-05 13:56:49	temp	Նոր վարկային դիմում	Գյուղատնտեսություն

ՎՔՀՓ - Վարկային զեկույցի հարցումների ընդհանուր թիվը
ՎՔՀՓՅՕ - Վարկային զեկույցի հարցումների թիվը վերջին 30 օրվա ընթացքում
ՎՊԱ - Վարկի տրամադրման ամսաթիվը
ՎՎՄԱ - Վարկի վերջին մարման ամսաթիվը
ՊՆԿԳ - Պայմանագրով նախատեսված վարկի գումարը
ՓՄԳՄ - Փաստացի մայր գումարի մնացորդը
ԺՄԳՄ - ժամկետանց մայր գումարի մնացորդը
ԺՏ - ժամկետանց տոկոսը
ՎԺՊԱ - Վարկը ժամկետանց դառնալու ամսաթիվը
ԱԿ - Արժույթի կոդը
ՎՈՊ - Վարկային ռիսկի դասը

OK Սպասման գրաֆիկին համապատասխան
NO Տվյալը առկա չէ
30 30օր ուշացում
60 60օր ուշացում
90 90օր ուշացում
120 120օր ուշացում
! 120օրից ավել ուշացում
զործող
մարված

ԱԲՌԱ-ն տրամադրում է իրավաբանական անձանց վերաբերյալ 4 տեսակի վարկային զեկույցներ, որոնք պարունակում են հետևյալ տվյալները՝

ՀՀ	Զեկույցի տեսակը	Զեկույցում պարունակվող տվյալներ են
1	**ԱՊ0** զեկույց ժամկետանց և դասակարգված վարկերի առկայության վերաբերյալ	▪ հարցման պահին ժամկետանց և դասակարգված վարկերի առկայության վերաբերյալ ▪ տեղեկություններ, իրավաբանական անձի վերաբերյալ հայտնի վարկերի քանակի, այդ թվում՝ մարված և ժամկետանց վարկերի քանակի և դրանց ռիսկի դասի վերաբերյալ տեղեկություններ:
2	**ԱՊ1** զեկույց ընթացիկ, ժամկետանց և դասակարգված վարկերի վերաբերյալ	▪ վիճակագրական տվյալներ կատարված հարցումների վերաբերյալ, ինչպես նաև ▪ ընթացիկ ժամկետանց և դասակարգված վարկերի վերաբերյալ տեղեկություններ:
3	**ԱՊ2** ընթացիկ վիճակի զեկույց	▪ կատարված հարցումների վերաբերյալ վիճակագրական տվյալներ, ինչպես նաև ▪ ընթացիկ բոլոր վարկերի վերաբերյալ տեղեկություններ:
4	**ԱՊ2** ամբողջական զեկույց	▪ կատարված հարցումների վերաբերյալ վիճակագրական տվյալներ, ինչպես նաև ▪ ընթացիկ և նախկինում մարված բոլոր վարկերի վերաբերյալ տեղեկություններ:

ԱՔՌԱ-ի կողմից ներկայացվող առևտրային վարկային զեկույցի օրինակ.

ՎԱՐԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ԱՌՑ(ամբողջական)

№: TEM-RO-5-2008-58

Տպել զեկույցը

Հարցման ամսաթիվ: 05/05/2008

Հարցում կատարող: temp
Օգտագործող: ՄՈՒՇԵՂ ԿԱՐՊԵՏՅԱՆ

Անվանում՝ **"ԳԱՄՄԱ ՍԵՐՎԻՍ ԿԵՆՏՐՈՆ" ՍՊԸ**
ՀՎՀՀ՝ **09999999**
Պետ. ռեգ. համար՝ **123.456.78901**
Գրանցման ամսաթիվ՝ **18-02-2001**
Ռեզիդենտությունը՝ **Ռեզիդենտ**
Գործադիր մարմնի ղեկավար՝ **ՊՈՂՈՍ ՊՈՂՈՍՅԱՆ**
Գործունեության ոլորտը՝ **Թանկարժեք իրերի արդյունաբերություն**

Հայտնի հասցեներ՝
10-10-2006 Ք. ԳՅՈՒՄՐԻ, ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ 49

ՎԶՀՓ՝ **29**
ՎԶՀՓ30՝ **6**

Գումարային պարտքը՝ AMD - 0 USD - 0

Ուշադրություն՝ սույն վարկային զեկույցը կազմվել է ԱՔՌԱ-ի անդամ կազմակերպություններից ստացված տվյալների հիման վրա

Ստացված վարկեր, փոխառություններ և տրամադրված երաշխավորություններ

Վարկ համար՝ 336429045

Վարկատու կազմակերպություն՝temp

Թարմացվել է առ 02-10-2007

Վարկի կարգավիճակը - մարված
Վարկային պայմանագրի ամսաթիվը - 01-10-2006
Վարկի տրամադրման ամսաթիվը - 01-10-2006
Վարկի վերջնական մարման ամսաթիվը - 01-10-2009
Վարկի փաստացի մարման ամսաթիվը - 02-10-2007

Վարկի տեսակը - Լիզինգ
Պայմանագրով նախատեսված վարկի գումարը - 150.000 USD
Փաստացի տրամադրված գումարը - 150.000 USD
Փաստացի մարված գումարը - 150.000 USD
Փաստացի մայր գումարի մնացորդը - 0 USD

ժամկետանց մայր գումարի մնացորդը - 0 USD
Վարկը ժամկետանց դառնալու ամսաթիվը - 00-00-0000
ժամկետանց տոկոսը - 0 USD
Վարկային ռիսկի դասը - Ստանդարտ

Նշումներ -

Վարկի տարեկան տոկոսադրույքը - 10%
Վարկի օգտագործման ոլորտը - Լեռնահանքային արդյունաբերություն
Վարկի օգտագործման վայրը - ԼՈՌԻ
Երաշխավորողների թիվը - 1
Գրավի առարկան - Անշարժ գույք
Գրավի առարկայի արժեքը - 150.000 USD
Վարկի պայմանների վերանայումների թիվը - 0

	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1
2008								NO	NO	NO	NO	NO
2007	NO	NO	OK	OK	OK	OK	OK	OK	OK	OK	OK	OK
2006	OK	OK	OK									

Նշումներ գրավի վերաբերյալ -

Ստացված վարկեր, փոխառություններ և տրամադրված երաշխավորություններ

Վարկ համար՝ 336428440

Վարկատու կազմակերպություն՝temp

Թարմացվել է առ 02-10-2007

Վարկի կարգավիճակը - մարված
Վարկային պայմանագրի ամսաթիվը - 24-05-2005
Վարկի տրամադրման ամսաթիվը - 24-05-2005
Վարկի վերջնական մարման ամսաթիվը - 24-09-2006
Վարկի փաստացի մարման ամսաթիվը - 23-09-2006

Վարկի տեսակը - Լիզինգ
Պայմանագրով նախատեսված վարկի գումարը - 24.000.000 AMD
Փաստացի տրամադրված գումարը - 20.000.000 AMD
Փաստացի մարված գումարը - 20.000.000 AMD
Փաստացի մայր գումարի մնացորդը - 0 AMD

ժամկետանց մայր գումարի մնացորդը - 0 AMD
Վարկը ժամկետանց դառնալու ամսաթիվը - 00-00-0000
ժամկետանց տոկոսը - 0 AMD
Վարկային ռիսկի դասը - Ստանդարտ

Նշումներ -

Վարկի տարեկան տոկոսադրույքը - 13%
Վարկի օգտագործման ոլորտը - Լեռնահանքային արդյունաբերություն
Վարկի օգտագործման վայրը - ՇԻՐԱԿ
Երաշխավորողների թիվը - 2
Գրավի առարկան - Ապրանքներ, Անշարժ գույք
Գրավի առարկայի արժեքը - 32.000.000 AMD
Վարկի պայմանների վերանայումների թիվը - 1

	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1
2006				NO	NO	NO	NO	NO	NO	NO	NO	NO
2005	NO	NO	NO	NO	NO	NO	NO	NO				

Նշումներ գրավի վերաբերյալ -

Սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ

Սեփականատերեր 1

Վարկեր	ՎՊԱ	ՎՎՄԱ	ՊՆՎԳ	ՓՄԳՄ	ժՄԳՄ	ժՏ	ՎԺՊԱ	ԱԿ	ՎՈՊ
Վարկ 1	01-06-2007	01-06-2009	15.000.000	9.000.000	0	0	01-07-2007	AMD	Ոչ ստանդարտ
Վարկ 2	11-04-2005	07-01-2007	2.700.000	0	0	0	11-06-2007	AMD	Ստանդարտ

Փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկություններ

Փոխկապակցված անձ 1

Անուն, ազգանուն՝ **ԱՂԱՍԻ ԱՂԱՍՅԱՆ**
Ծննդյան ամսաթիվ՝ **1969-10-25**
Սոց. քարտի համար՝ **5264789552**
Անձնագրի սերիա՝ **ZZ1111111**

Վարկեր	ՎՊԱ	ՎՎՄԱ	ՊՆՎԳ	ՓՄԳՄ	ժՄԳՄ	ժՏ	ՎԺՊԱ	ԱԿ	ՎՈՊ
Վարկ 1	13-02-2007	13-02-2009	27.000	4.000	0	0	-	USD	Ստանդարտ
Վարկ 2	10-03-2004	10-03-2007	2.600.000	0	0	0	01-09-2006	AMD	Կասկածելի

"ԳԱՄՄԱ ՍԵՐՎԻՍ ԿԵՆՏՐՈՆ" ՍՊԸ-ի վերաբերյալ կատարած հարցումներ

Ամսաթիվ	Հարցում կատարող անձը	Նպատակ	Տեսակ
2008-05-04 15:59:55	temp	Նոր վարկային դիմում	Սենի արդյունաբերություն

ՎԶՀՓ - Վարկային զեկույցի հարցումների ընդհանուր թիվը
ՎԶՀՓ30 - Վարկային զեկույցի հարցումների թիվը վերջին 30 օրվա ընթացքում
ՎՊԱ - Վարկի տրամադրման ամսաթիվը
ՎՎՄԱ - Վարկի վերջին մարման ամսաթիվը
ՊՆՎԳ - Պայմանագրով նախատեսված վարկի գումարը
ՓՄԳՄ - Փաստացի մայր գումարի մնացորդը
ժՄԳՄ - ժամկետանց մայր գումարի մնացորդը
ժՏ - ժամկետանց տոկոսը
ՎԺՊԱ - Վարկը ժամկետանց դառնալու ամսաթիվը
ԱԿ - Արժույթի կոդը
ՎՈՊ - Վարկային ռիսկի դասը

OK - Սարման գրաֆիկին համապատասխան
NO - Տվյալը առկա չէ
30 - 30օր ուշացում
60 - 60օր ուշացում
90 - 90օր ուշացում
120 - 120օր ուշացում
1 - 120օրից ավել ուշացում
զրոյական
մարված

Ստորև ներկայացնում ենք ԱՔՌԱ վարկային բյուրոյի կողմից ներկայացվող վարկային զեկույցների գները.

Վարկային զեկույցի տեսակը	Հիմնական գինը, ՀՀ դրամ
ՍՊ0	400
ՍՊ1	700
ՍՊ2	1,100
ՍՊ3	1,500
ԱՌ0	800
ԱՌ1	1,400
ԱՌ2	2,200
ԱՌ3	3,000

Սույն գները չեն ներառում 20% Ավելացված արժեքի հարկը:

3.2 Վարկառուի սեփական վարկային զեկույց (Ինքնահարցում).

Յուրաքանչյուր անձ (անհատ կամ կազմակերպություն) կարող է իր սեփական վարկային զեկույցը ձեռք բերել ԱՔՌԱ-ի գրասենյակից կամ ԱՔՌԱ-ի անդամ կազմակերպությունից՝ վերջիններիս հետ վարկային կամ կապակցված այլ գործարքի մեջ մտնելու համար:

Վարկային զեկույցն ԱՔՌԱ-ի գրասենյակից ստանալու համար անհրաժեշտ է ԱՔՌԱ ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

Ֆիզիկական անձանց համար՝
- Վարկային զեկույց ստանալու դիմում,
- անձի անձնագիրը և դրա պատճենը,
- անձի սոցիալական քարտը և դրա պատճենը (ոչ պարտադիր),
- հատուկ դեպքերում ԱՔՌԱ-ի կողմից պահանջվող այլ փաստաթղթեր:

Ֆիզիկական անձի անունից այլ անձ ներկայանալու դեպքում՝
- Վարկային զեկույց ստանալու դիմում,
- լիազորագիր՝ տրված շահառու անձի կողմից (նոտարական վավերացմամբ),
- լիազորված անձի անձնագիրը և դրա պատճենը,
- շահառու անձի սոցիալական քարտը և դրա պատճենը (ոչ պարտադիր),
- հատուկ դեպքերում ԱՔՌԱ-ի կողմից պահանջվող այլ փաստաթղթեր:

Իրավաբանական անձանց համար՝
- Վարկային զեկույց ստանալու դիմում,
- իրավաբանական անձի պետական ռեգիստրի գրանցման վկայականը,
- իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի անձնագիրը և անձնագրի պատճենը,
- հատուկ դեպքերում ԱՔՌԱ-ի կողմից պահանջվող այլ փաստաթղթեր:

Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի փոխարեն այլ անձ ներկայանալու դեպքում՝
- Վարկային զեկույց ստանալու դիմում,
- իրավաբանական անձի պետական ռեգիստրի գրանցման վկայականը,
- լիազորագիր՝ տրված իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի կողմից,
- լիազորված անձի անձնագիրը և անձնագրի պատճենը,
- հատուկ դեպքերում ԱՔՌԱ-ի կողմից պահանջվող այլ փաստաթղթեր:

Վարկային զեկույցը սովորաբար տրամադրվում է անմիջապես, եթե ներկայացված են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Առանձին դեպքերում, սակայն, վարկային զեկույցի տրամադրման գործընթացը կարող է տևել մինչև երկու աշխատանքային օր:

4. ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ԿԱՐԳԱՎՈՐՈՂԻ, ՎԱՐԿԱՌՈՒՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՏՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ

4.1 Վարկային բյուրոյի ազդեցությունը Տնտեսության վրա.

Ստորև ներկայացնում ենք մի քանի մակրոտնտեսական ցուցանիշներ, որոնք հստակ ցույց են տալիս վարկային բյուրոյի դրական ազդեցությունը տնտեսության վրա.

- ✓ Փոխառու միջոցների ներգրավվածությունը ինչպես տնտեսության, այնպես էլ սպառողական վարկավորման մեջ ավելի բարձր է այն երկրներում, որտեղ գործում են վարկային բյուրոներ*.



*Աղբյուր: Համաշխարհային բանկ 2003:Ուսումնասիրություն:

4.2 Վարկային բյուրոյի ազդեցությունը Կարգավորողի (Հայաստանի դեպքում ՀՀ Կենտրոնական բանկի) գործունեության արդյունավետության վրա

Վարկային բյուրոյի գործունեության շնորհիվ Կարգավորողը հնարավորություն է ստանում՝

- Արդյունավետ կերպով ուսումնասիրել վարկերի բաշխվածությունը,
- ընկերությունների և ֆիզիկական անձանց տվյալները համակողմանիորեն և պարբերաբար թարմացնել՝ հնարավորություն տալով արդյունավետ կերպով ուսումնասիրել վարկային ռիսկը ողջ տնտեսության համար,
- ապահովել վարկավորման ծավալների աճը՝ առանց վնասելու վարկի որակական հատկանիշները,
- նվազեցնել ժամկետանց վարկերի և չկատարված ֆինանսական պարտավորությունների ծավալները տնտեսության մեջ:

4.3 Վարկային բյուրոյի ազդեցությունը Վարկատուների վրա.

Վարկային <u>բյուրոն խթանում է վարկավորումը՝ բարձրացնելով վարկավորման արդյունավետությունը:</u>
Ի ապացույց վերը նշված պնդման՝ ստորև բերված են մի քանի վիճակագրական տվյալներ:

- Կանադայում վարկային բյուրոյի հիմադրումից հետո ընդամենը 18 ամսվա ընթացքում վարկավորման համար անհրաժեշտ ժամանակահատվածը 9 օրից նվազել է մինչև 3 օր,
- ԱՄՆ-ում վարկային բյուրոյի հիմնադրումից հետո վարկավորման համար անհրաժեշտ ժամանակահատվածը 3-4 շաբաթից նվազել է մինչև 4 ժամ,
- Հոլանդիայում 8-10 ժամից վարկավորման ժամանակահատվածը նվազել է 15 րոպե բանկի նախկին հաճախորդների համար և մինչև 45 րոպե՝ նոր հաճախորդների համար,
- Մեկ այլ ԱՄՆ բանկի համար մանր բիզնես վարկերի ձևակերպման միջին ծախսը վարկային բյուրոյի հետ աշխատելուց հետո նվազել է 250 $-ից մինչև 100$-ի:



*Աղբյուր: Համաշխարհային բանկ 2001թ-ից 2002թ.: հետազոտություն:

Այսպիսով, գծապատկերից պարզ երևում է, որ վարկային բյուրոյի աշխատանքը ավելացնում է նրա հետ համագործակցող վարկատու կազմակերպության արդյունավետությունը, այդ թվում՝

- արագանում է վարկավորման գործընթացը,
- նվազում են գործառնական ծախսերը:

Վարկային բյուրոյի գործունեությունը նվազեցնում է նաև վարկառուի ռիսկի գնահատման ժամանակն ու ծախսերը, օժանդակում է ֆինանսական դաշտի վարկային ռեսուրսների առավել օպտիմալ տեղաբաշխմանը և խթանում է վարկավորման ծավալների աճը:

Այսպիսով, վարկային բյուրոյի հետ համագործակցության շնորհիվ ֆինանսական և առևտրային հաստատությունները հնարավորություն են ստանում՝

- առավել տեղեկացված լինել իրենց հաճախորդների ռիսկայնությանը՝ ունենալով տեղեկություն նրանց ֆինանսական պարտավորությունների կատարման կարգապահության և ներկա վարկային պարտավորությունների մասին,
- կարճ ժամանակում ճանաչել ցածր ռիսկայնություն ունեցող հաճախորդներին,
- տեղեկացված լինել ֆինանսական պարտավորությունների նկատմամբ անպարտաճանաչ հաճախորդների մասին,
- վայրկյանների ընթացքում ստանալ հնարավոր հաճախորդների վարկային պատմությունն արտացոլող զեկույց՝ խնայելով վարկառուի վարկարժանության գնահատման ծախսն ու ժամանակը,
- նվազեցնել ֆինանսական և գործարար դաշտի վարկային ռիսկերը:

Սա հնարավորություն է ընձեռում վարկատուներին գնահատել և կառավարել իրենց ռիսկերն ըստ պատշաճի և.

- Մեծացնել իրենց թափանցելիությունը և ավելացնել վարկավորման քանակներն ու ծավալները

- Աշխատել էֆեկտիվ և լավացնել իրենց վարկային պորտֆելների որակը
- Բարելավել վարկավորման գործընթացը՝ ժամանակը օպտիմալ ծախսելով, ինչն արդյունք է տարբեր գործողություններից զերծ մնալու շնորհիվ ծախսերի նվազման

Վարկային բյուրոների ծառայությունների օգտագործման հետագա միտումները.

- Վարկավորումը հետզհետե կատարվում է՝ ոչ թե հիմք ընդունելով ապահովության միջոցների (գրավ) գնահատականը, այլ վարկառուի ֆինանսական միջոցների մուտքերի-ելքերի գնահատականը

- Վարկատու կազմակերպությունը հիմնվում է ոչ թե անձնական հարաբերությունների, այլ վարկային տեղեկատվության վրա
- Վարկավորումը կատարվում է ոչ թե սուբյեկտիվ գործոնների, այլ առկա վարկային տեղեկատվության հիման վրա
- Եվ, ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐԸ, վարկատուին հնարավորություն է ընձեռվում իր ծառայությունների գները և պայմանները (տոկոսադրույք, ժամկետայնություն և այլն) տարբերակել՝ կախված վարկառուի՝ վճարումներ կատարելու ունակությունից (վարկային պատմություն)

4.4 Վարկային բյուրոյի ազդեցությունը Վարկառուների վրա.

Վարկային բյուրոյի միջոցով յուրաքանչյուր անձ հնարավորություն է ստանում կերտել իր սեփական վարկային պատմությունը և օգտագործել այն որպես ծանրակշիռ ակտիվ ֆինանսական ծառայություններից օգտվելու ճանապարհին:

Այսպիսով, ցանկացած անձ սկսում է առավել կարգապահ լինել ֆինանսական և առևտրային հաստատության նկատմամբ ստանձնած ֆինանսական պարտավորությունների կատարման հարցում:

Արդյունքում, հասարակության մեջ ձևավորվում է ԼԱՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ստեղծելու գիտակցությունը՝ որպես ֆինանսական պարտավորությունների կատարման լրացուցիչ խթան:

Արդյունքում, ֆինասական հաստատությունները սկսում են մրցել ԼԱՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ունեցող հաճախորդների համար՝ առաջարկելով իրենց ծառայությունների տրամադրման և սպասարկման ավելի բարենպաստ պայմաններ:

ԱՔՌԱ –ի անդամները

ԲԱՆԿԵՐ

		“Անելիք բանկ” ՓԲԸ	Հասցե՝ Երևան, Բաղրամյան 75 www.anelik.am	Հեռ.՝ 221451 Ֆաքս՝ 226581
	AREXIMBANK	“Առէկսիմբանկ” ՓԲԸ	Հասցե՝ Երևան, Մ. Մկրտչյան 12 www.areximbank.am	Հեռ.՝ 520995 Ֆաքս՝ 580506
	ACBA-CREDIT AGRICOLE BANK	“ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ” ՓԲԸ	Հասցե՝ Երևան, Բայրոնի 1 www.acba.am	Հեռ.՝ 568585 Ֆաքս՝ 543485
		“Արցախբանկ” ՓԲԸ	Հասցե՝ Երևան, Կիևյան 3 www.artshakhbank.am	Հեռ.՝ 277719, 277729 Ֆաքս՝ 271249
	ARMSWISSBANK	“Արմսվիսբանկ” ՓԲԸ	Հասցե՝ Երևան, Խանջյան 13/2 www.armswissbank.am	Հեռ.՝ 529593 Ֆաքս՝ 529591
	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	“Արարատբանկ” ՓԲԸ	Հասցե՝ Երևան, Պուշկինի 19 www.araratbank.am	Հեռ.՝ 534331 Ֆաքս՝ 547894
	ASHB ARDSHININVESTBANK	“Արդշինինվեստբանկ” ՓԲԸ	Հասցե՝ Երևան, Գրիգոր Լուսավորչի 13 www.ashib.am	Հեռ.՝ 540404, 528513 Ֆաքս՝ 567486
		“ԲՏԱ Ինվեստբանկ” ՓԲԸ	Հասցե՝ Երևան, Թումանյան 1 www.bta.am	Հեռ.՝ 520598 Ֆաքս՝ 527451
	HSBC	“Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան” ՓԲԸ	Հասցե՝ Երևան, Տերյան 66 www.hsbc.am	Հեռ.՝ 587088, 515000 Ֆաքս՝ 527078
	INECOBANK	“Ինեկոբանկ” ՓԲԸ	Հասցե՝ Երևան, Թումանյան 17 www.inecobank.am	Հեռ.՝ 563725 Ֆաքս՝ 545166
	CASCADE BANK	“Կասկադ բանկ” ՓԲԸ	Հասցե՝ Երևան, Դեղատան 6 www.cch.com	Հեռ.՝ 520432
		“Կոնվերս բանկ” ՓԲԸ	Հասցե՝ Երևան, Վազգեն Սարգսյան 26/1 www.conversebank.am	Հեռ.՝ 511200, Ֆաքս՝ 511212, 230759
	ADB	“ Զարգացման հայկական բանկ” ԲԲԸ	Հասցե՝ Երևան, Պարոնյան 21/1 www.armdb.com	Հեռ.՝ 591400 Ֆաքս՝ 591405
	ABB «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ	“Հայբիզնեսբանկ” ՓԲԸ	Հասցե՝ Երևան, Նալբանդյան 4 www.arminvestbank.am	Հեռ.՝ 540502 Ֆաքս՝ 545835
	AEB ՀԱՅԷԿՈՆՈՄ	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ	Հասցե՝ Երևան, Ամիրյան 23/1 www.aeb.am	Հեռ.՝ 563332 Ֆաքս՝ 538904, 530506
	MELLAT BANK	“Մելլաթ բանկ” ՓԲԸ	Հասցե՝ Երևան, Ամիրյան 6 www.mellatbank.am	Հեռ.՝ 581791, 581523 Ֆաքս՝ 540885
		“Յունիբանկ” ՓԲԸ Հասցե՝ Երևան,	Հանրապետության 39 www.unibank.am	Հեռ.՝ 521532, 521320, Ֆաքս՝ 567046
	Պրոկրեդիտ Բանկ	“Պրո Կրեդիտ բանկ" ՓԲԸ	Հասցե՝ Երևան, Մոսկովյան 31/99 www.procreditbank.am	Հեռ.՝ 514860, 500191 Ֆաքս՝ (+37410) 514863
		“Պրոմեթեյ բանկ” ՓԲԸ	Հասցե՝ Երևան, Հանրապետության 44/2 www.prometeybank.am	Հեռ.՝ 562036, 521705 Ֆաքս.՝ 545719
	ВТБ	“ՎՏԲ-Հայաստան բանկ” ՓԲԸ	Հասցե՝ Երևան, Նալբանդյան 46 www.vtb.am	Հեռ.՝ 565860 Ֆաքս՝ 565578

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

		"Մալաթիա ՈՒՎԿ" ՍՊԸ	Հասցե՝ Երևան, Սեբաստիա 66	Հեռ.՝ 740190, 740150 Ֆաքս՝ 748012
		"ՍԵՖ Ինտերնեյշնլ ՈՒՎԿ" ՍՊԸ	Հասցե՝ Երևան, Քոչար 19/1 www.wvarmenia.am	Հեռ.՝ 577771, 575055 Ֆաքս՝ 552522
		"Կակադ Կրեդիտ ՈՒՎԿ" ՓԲԸ	Հասցե՝ Երևան, Քոչար 5/1 www.cascredit.com	Հեռ.՝ 278776, 265528 Ֆաքս՝ 278221
		"Վաշինգթոն Քափիթալ ՈՒՎԿ" ՓԲԸ	Հասցե՝ Երևան, Մ. Խորենացի 4-2 www.washingtoncapital.am	Հեռ.՝ 535811 Ֆաքս՝ 535823
		"Նոր Հորիզոն ՈՒՎԿ" ՍՊԸ	Հասցե՝ Երևան, Կոմիտաս 54	Հեռ.՝ 287902, 297308 Ֆաքս՝ 287902
		"Էկումենիկ եկեղեցական փոխատվական ֆոնդ ՈՒՎԿ" ՍՊԸ	Հասցե՝ ք. Էջմիածին, Զոյա 2 www.eclof.org	Հեռ.՝ 517158 Ֆաքս՝ 517152
		"ԱԳԲԱ Լիզինգ վարկային կազմակերպություն" ՓԲԸ	Հասցե՝ Երևան, Բայրոնի 1	Հեռ.՝ 563945 Ֆաքս՝ 563945
		"Նորվիկ ունիվերսալ վարկային կազմակերպություն" ՓԲԸ	Հասցե՝ Երևան, Խանջյան 41-3 www.norvik.am	Հեռ.՝ 522787, 522334, Ֆաքս՝ 547789